ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

ԳԻՐՔ № 28

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Հ. Ս. Խ. Հ. ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

362.7
Ղ-78

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԻԿԱՆ ԴՈՐԾԱՊԻՐ ԿՈՄԻՏԵԻ

ՅԵՐԵՎԱՆ 1928 Թ.

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

MAR 2010

362.7
Է-78
Ար

119

ԳԻՐՔ № 28

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Հ. Ս. Խ. Հ. ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Անվան
Публичная Библиотека

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՏԻ

ՅԵՐԵՎԱՆ 1928 Թ.

12457 - 57

08 APR 2013

43.938

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ I ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 4180
ԳՐԱՌԵՊ. 824 Գ. ՏԻՐԱԺ 1200

Հաստատված է Ներքգործ-
ժողկոմատի կողմից 27
հունիսի 1928 թ. և
ցուցակագրված

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ՀՍԽՀ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

1. «ՀՍԽՀ Յերեխաների Բարեկամ» ընկերությունը հիմնվում է ՀՍԽՀ Կենտգործկոմին առընթեր։

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

2. «Յերեխաների Բարեկամ» ընկերությունն աշխատավորների մի կամավոր միություն է, որն իր առաջ դնում է հետևյալ խնդիրները.—

ա) իր կազմակերպությունների և անդամների միջոցով կիրարկել սոցիալիստական դաստիարակության սկզբունքներն անչափահասների նկատմամբ, ամեն կերպ բարելավելով և առողջացնելով յերեխաների կենցաղը և ոժանդակել համապատասխան պետական ու հասարակական մարմիններին մանուկների սոցիալական դաստիարակությունը կազմակերպելու գործում, սոցիալական դաստիարակության գաղափարները տարածել աշխատավորական լայն շրջաններում և առաջին հերթին իր անդամների մեջ.

բ) պայքարել մանուկների իրավունքների խախտման դեմ և նպաստել խորհրդային օրենքներով սահմանված մանկական իրավունքը պաշտպանելու գաղափարի մասսայականացմանն ու իրականացմանը.

գ) ընկերության միջոցներով ու ուժերով պայքար մղել յերեխաների անապատանության դեմ.

դ) վերը հիշված խնդիրներն իրականացնելու համար աշխատավորության լայն մասսաներին մասնակից դարձնել սոցիալական դաստիարակություն կազմակերպելու և իրագործելու աշխատանքներին։

II. «ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3. 2-րդ հոդվածում նշված նպատակներն իրականացնելու համար ընկերությունը.—

ա) իր բոլոր ուժերով ու միջոցներով նպաստում է յերեխաների կյանքի առողջացմանն աշխատավորության ընտանիքներում, վորոնց թվում «ՀՍԽՀ Յերեխաների Բարեկամ» ընկերության անդամների ընտանիքներում, հատուկ ուշադրություն և դարձնում ազգային փոքրամասնությունների մեջ կատարվող աշխատանքներին, նկատի առնելով նրանց կենցաղային բոլոր առանձնահատկությունները.

բ) ընտանիքներում, տներում ոգնություն և ցույց տալիս այն անչափահասներին, վորոնք ընդհանրապես նյութական ծանր պայմաններում են գտնվում, կամ ժամանակավորապես կարիքի մեջ են ընկել.

գ) նպաստում, ոժանդակում է. վոր մանկատների յերեխաները և անչափահաս անապատանները խնամատարության հանձնվեն աշխատավորների ընտանիքներում, միաժամանակ համապատասխան հսկողություն սահմանելով այդպիսի խնամատարությունների նկատմամբ.

դ) աջակցում է անչափահասների վրա խնամակալություն նշանակելուն.

ե) աջակցում է իրենց ազգականներին կորցրած անչափահասներին և յերեխաներին, ինչպես և իրենց յերեխաներին կորցրած ծնողներին, վորպեսզի յերեխաները գտնվեն և վերադարձվեն իրենց ծնողների կամ ազգականների ընտանիքը.

զ) գոյություն ունեցող մանկական հիմնարկներին ցույց և տալիս ամեն տեսակ ոգնություն, ինչպես նյութական միջոցներով, այնպես էլ իր անդամների կենդանի ուժերով – մանկական հիմնարկների շեֆություն ստանձնելով, այդ հիմնարկների յերեխաներին ընկերության արհեստանոցներում տեղավորելով, անչափահասներին արտադրության այս կամ այն ճյուղում տեղավորելով և այլն.

ը) մասնակցում է պետհիմնարկների կողմից կազմակերպված՝ մանկական հիմնարկների հետազոտություններին, վորոնց նպատակն է ուսումնասիրել մանկական հիմնարկների դրությունը, բացի դրանից առանձին շրջաններում յերևան և հանում և հաշվի առնում անապատան, անխնամ յերեխաներին ու անչափահասներին։ Ընկերության անդամներից կազմակերպում և կամավոր խմբակներ մանկական սոցիալական տեսչության ասպարեզում և այլ նպատակներով աշխատելու համար.

թ) ոժանդակում և համապատասխան պետական մարմիններին և ինքնուրույն կերպով կազմակերպում է զանազան տիպի մանկական հիմնարկներ, ինչպես անապատան յերեխաների համար (գիշերելու տներ, ընդունարաններ, հանրակացարաններ և այլն), այնպես և անապատանության առաջն առնելու հիմնարկներ (ամառային հրապարակներ, մանկապարտեզներ, սեղանատներ, ակումբներ, կրթական-արտադրական արհեստանոցներ և այլն), բարելավում է դպրոցական յերեխաների կենցաղը՝ կազմակերպելով նախաճաշեր, չքավորներին մատակարարելով դասական պիտույքներ, հագուստ, կոշիկ և այլն)։

ԾԱՆՈԹ.—Ընկերությունը մանկական հիմնարկները կազմակերպում է համապատասխան

պետական մարմինների համաձայնությամբ, յերեխաների անապատանության դեմ պայքարելու միջոցների ընդհանուր ծրագրի իրականացման կարգով.

ժ) կապալով տեղեր և վերցնում մանկական սանատորիաներում, անտառային դպրոցներում և ընդհանրապես սժանդակում և ինչպես մանկական հիմնարկներում, այնպես էլ դուրսը յեղած յերեխաների բժշկա-սանիտարական ոգնություն կազմակերպելու գործին.

ի) սահմանված կարգով կազմակերպում և դասախոսություններ, զեկուցումներ, ցուցահանդեսներ, հրատարակում և թերթիկներ, գրքույկներ և ագիտացիոն պրոպագանդիստական այլ նյութեր.

լ) ընկերության խորքն և գրավում նոր անդամներ.

խ) աջակցում և ինչպես կենտրոնական, այնպես և տեղական մանկական հանձնաժողովներին միջոցներ գտնելու գործում և իր աշխատանքը կատարում և լիովին համաձայնեցնելով ինչպես մանկական հանձնաժողովի, այնպես և ժողովրդական լուսավորության, առողջապահության, կարմիր Խաչի և այլ հիմնարկների հետ, վորոնք աշխատանք են կատարում յերեխաների կյանքը առողջացնելու և բարելավելու և նրանց տնապատանության դեմ պայքարելու ուղղությամբ։

4. «Յերեխաների Բարեկամ» ընկերությունը համաձայն իր նպատակների իրավունք ունի սեփականության առուծախի գործարքներ կատարելու, պայմանագրեր կնքելու, պարտականություններ ստանձնելու, դատարանում վորպես հայցվոր և պատասխանատու հանդես գալու։

5. Իր պարտականությունների դիմաց «Յերեխաների Բարեկամ» ընկերությունը պատասխանատու չե իր ամբողջ գույքով և դրամագլխով։

6. «Յերեխաների Բարեկամ» ընկերությունն ունի իր դրոշն (շտամպ)ու կնիքը, վորի վրա նշանակված է ընկերության անունը, և իր գործունեությունը տարածում է ամբողջ ՀՍԽՀ սահմաններում։

III. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ

7. Ընկերության անդամ կարող են լինել 18 տարին լրացրած յերկու սեռի քաղաքացիները, վորոնք ընտրական իրավունք են վայելում, համաձայն ՀՍԽՀ Սահմանադրության, և արտավորված չեն դատարանով, ինչպես նաև՝ իրավական անձինք, կառավարական, արհեստակցական, կոոպերատիվ և այլ հիմնարկներն ու ձեռնարկությունները, վորոնք ընկերության աշխատանքներին մասնակցում են իրենց ներկայացուցիչների միջոցով։

ԾԱՆՈԹ.—18 տարին չլրացրած անձինք կարող են ընկերության աշխատանքներին մասնակցել, վորպես աջակցողներ, խորհրդակցական ձայնի իրավունքով։

8. «Յերեխաների Բարեկամ» ընկերության յուրաքանչյուր անդամ տալիս է մուտքի և անդամակցական վճար. մուտքի վճարը հավասար է մեկ ամսվա անդամավճարին։ Անդամավճար սահմանվում է՝ 20—50 ռ. ստացողների, ուսանողների, աշակերտների, կարմիր բանակայիների համար—5 կոպ., 50—100 ռ. ստացողների համար—10 կ., 100—150 ռ. ստացողների համար—20 կ., և 150 ռուբլուց բարձր ստացողների համար—50 կ.։

9. Ընկերության անդամներին տրվում են անդամագրքույկներ։

10. Ընկերության այն անդամները, վորոնք 6 ամիս շարունակ իրենց դրամական կամ նյութական մուծումները չեն կատարել, համարվում են ընկերությունից հեռացվածներ և նորից ընդունվել կարող են ընդհանուր կարգով։

11. Ընկերության անդամի ընդունելությունը կատարվում է «Յերեխաների Բարեկամ» բջիջի բյուրոյի միջոցով, վորից հետո հաստատվում է բջիջի ընդհանուր ժողովում։

12. Ընկերության անդամությունից հեռանալը կարող է տեղի ունենալ. —

ա) կամավոր հեռանալու դեպքում.

բ) անդամակցական վճարները 10 հոդ. համաձայն չմուծելու դեպքում.

գ) ընկերության հանապատասխան բջիջի ընդհանուր ժողովի վորոշմամբ, - յերբ հեռացվողը ընկերությանը վարկաբեկող արարք է կատարել, կամ քրեական հանցանք է գործել, ինչպես նաև յեթե խախտել է ընկերության կանոնադրությունը։

IV. «ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

13. «Յերեխաների Բարեկամ» ընկերության միջոցները կազմում են՝

ա) մուտքի վճարները և պարբերական անդամավճարները.

բ) կամավոր նվիրատվությունները.

գ) ընկերության կազմակերպած համերգների, շրջիկ կինոների, դասախոսությունների, ներկայացումների, մշակած հողամասերի, կատարած հասարակական աշխատանքների և այլ յեկամուտները։

14. Անդամավճարները մուծվում են այն ժամանակամիջոցում, վոր սահմանում է ընկերության հանրապետական խորհուրդը։

15. Ընկերության միջոցները ծախսվում են բացառապես կանոնադրությամբ նախատեսված նպատակների համար։

16. Ընկերության վերադաս և ստորադաս կազմակերպությունների միջև յղած հաշվետվության

կարգը սահմանում է «Յերեխաների Բարեկամ» ընկերության հանրապետական խորհուրդը։

V. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

17. Ընկերության կազմակերպության նախնական ձևն անդամներից կազմված բջիջներ են։ Աշխատանքները ղեկավարելու և բջիջի գործերը վարելու համար բջիջի անդամների ընդհանուր ժողովն ընտրում է բջիջի բյուրո, ինչպես և շրջանային կամ քաղաքային կոնֆերենցիայի ներկայացուցիչներ։

Շրջանային կամ քաղաքային կոնֆերենցիան, վոր կազմվում է բջիջների ներկայացուցիչներից, ընտրում է բջիջների շրջանային բյուրո և վերստուգիչ հանձնաժողով, ինչպես և ընկերության գավառային համագումարի ներկայացուցիչներ։

Ընկերության գավառային համագումարը, վոր կազմվում է կոնֆերենցիաների ընտրած ներկայացուցիչներից, ընտրում է ընկերության գավառային խորհուրդ և վերստուգիչ հանձնաժողով, ինչպես և ընկերության հանրապետական համագումարի պատգամավորներ։

18. «Յերեխաների Բարեկամ» ընկերության գերագույն մարմինն հանդիսանում է ընկերության հանրապետական համագումարը։

Ընկերության բոլոր գործերը, ինչպես և համագումարի վորոշումներն իրականացնելու աշխատանքը վարում է ընկերության հանրապետական խորհուրդը, վորն ընտրվում է համագումարում։ Վերջինն է վորոշում նաև անդամների թիվը։

Խորհրդի անդամների կազմից ընտրվում է նախագահություն՝ 3-ից մինչև 7 հոգի և 2 փոխանդամ։

Տեղերում բոլոր գործերին հետևում են՝

ա) գավառային խորհուրդը, վորն ընտրվում է գավառային համագումարի կողմից.

ը) բջիջների բյուրոն, որն ընտրվում է բջիջների շրջանային կամ քաղաքային կոնֆերենցիայի կողմից.

գ) բջիջի բյուրոն, որ ընտրվում է բջիջի անդամների ընդհանուր ժողովում։

ԾԱՆՈԹՈՒԹ.—Յուրաքանչյուր ընտրվող մարմնի քանակական կազմը վորոշում է այն ժողովը, վորն ընտրում է տվյալ մարմինը։ Ընկերության տեղական վարչական բոլոր մարմինները իրենց գործունեության ընթացքում յենթարկվում են ընկերության վերադաս մարմնին։

Ա. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՅԵՎ ԳԱՎԱՌԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

19. «Յերեխաների Բարեկամ» ընկերության խորհուրդը, վորը մեկ տարի ժամանակով ընտրվում է համագումարի կողմից, հանդիսանում է ընկերության բարձրագույն ղեկավար մարմինը և պահում է իր լիազորությունները մինչև առաջիկա համագումարի կազմից նոր խորհուրդ ընտրվելը։

20. Ընկերության խորհուրդը իրագործում է համագումարի վորոշումները, ուղղություն և տալիս ընկերության գործունեությանը և կատարում է նրա աշխատանքի ծրագիրն ու հաշվետվությունները։

21. Անմիջական աշխատանքների համար խորհուրդն ընտրում է նախագահություն։

22. Ընկերության խորհրդի նախագահությունը հանդես է գալիս ընկերության անունից այլ հիմնարկությունների և անձանց հետ հարաբերությունների մեջ մտնելիս, խորհրդի հաստատված ծրագրով և նրա հրահանգներով կենսագործում է ընկերության առաջադրված խնդիրները, ղեկավարում է ընկերության

նստարաս կազմակերպությունների գործունեությունը և պատասխանատու է նրանց աշխատանքների կանոնավորության համար։

Բ. ԲՋԻՋՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ

23. Բջիջների բյուրոն, վորն ընտրվում է շրջանային կոնֆերենցիայում, մինչև նոր կոնֆերենցիա հրավիրելը հանդիսանում է «Յերեխաների Բարեկամ» ընկերության բջիջների ղեկավար մարմինը և պահում է իր լիազորությունները մինչև բջիջների բյուրոների նոր կազմ ընտրվելը։

24. Բջիջների բյուրոն կենսագործում է շրջանային կոնֆերենցիայի վորոշումները և ընկերության գավառային ու հանրապետական համագումարների վորոշումները, կատարում է ընկերության գավառային և հանրապետական խորհուրդների հրահանգները, ղեկավարում է տեղական բջիջների գործունեությունը և հաստատում է նրանց աշխատանքի ծրագիրն ու հաշվետվությունները։

25. Բջիջների շրջանային բյուրոն անմիջական աշխատանքների համար ընտրում է մի քարտուղար։

26. Ընկերության նախնական կազմակերպությունը նրա բջիջն է, վորը կազմակերպվում է «Յերեխաների Բարեկամ» ընկերության վերադաս կազմակերպության նախաձեռնությամբ կամ հենց գործարանի, պետհիմնարկության, գյուղի, կոոպերատիվ միության աշխատակիցների, կրթական հիմնարկության, ուսանողության, զինվորական մասի նախաձեռնությամբ և այլն։

27. «Յերեխաների Բարեկամ» ընկերության յուրաքանչյուր նոր կազմակերպված բջիջ հաշվառման է յենթարկվում վերադաս կազմակերպության կողմից ընկերության գավառային և հանրապետական խոր-

հրդում, կամ բջիջների շրջանային կամ քաղաքային բյուրոյում։

28. Բջիջների անդամների ընդհանուր ժողովի կողմից ընտրվում է բջիջների բյուրո, բաղկացած 3 հոգուց, իսկ բյուրոյի գործերի ինչպես և բջիջների դրամական հաշիվների և ամբողջ գործունեության ստուգման համար ընտրվում է վերստուգիչ հանձնաժողով։

Բյուրոյի և վերստուգիչ հանձնաժողովի անդամների լիազորության ժամանակամիջոցը 6 ամիս է։

29. Բջիջը բյուրոն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է այս կանոնադրությամբ, վերադաս մարմինների վորոշումներով և հրահանգներով։

Գ. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

30. Վերստուգիչ հանձնաժողովը ընտրվում է համագումարի կողմից մեկ տարի ժամանակով։ Վերստուգիչ հանձնաժողովի անդամները իրենց միջից ընտրում են մի նախագահ։

31. Վերստուգիչ հանձնաժողովը հաշվետու է համագումարի առաջ և գործում է ինքնուրույն կերպով, նիստեր և հրավիրում իր հայեցողությամբ, բայց վոչ ուշ քան յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ։

32. Վերստուգիչ հանձնաժողովը ստուգում է ընկերության աշխատանքը վոչ միայն ըստ ձևի, այլ և ըստ էության, հետևում և ստուգում է գործավարության և հաշվետվության կանոնավորությունը, հետևում է թե՛ խորհրդի և թե՛ ընկերության առանձին անդամների կողմից կանոնադրությունը ճիշտ կիրառելուն, այլ և ստուգում է ընկերության բոլոր հիմնարկներն ու դրամարկղները։

Հետազոտում է ընկերության ընդհանուր գործունեությունը, հաշվետվության և վերստուգման վերաբերյալ նյութ և պատրաստում զեկուցումների համար, ղեկավարում և ստորագրում վերստուգիչ հանձնաժողովների գործունեությունը։

33. Ընկերության շրջանային բյուրոների և բջիջների վերստուգիչ հանձնաժողովների կառուցվածքը նման է «Ցերեխաների Բարեկամ» ընկերության (գավառական, հանրապետական) վերստուգիչ հանձնաժողովների կառուցվածքին։

Դ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ ՅԵՎ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆԵՐ

34. «Ցերեխաների Բարեկամ» ընկերության համագումարները գավառային և հանրապետական) լինում են՝

ա) հերթական, վորը հրավիրվում է ընկերության խորհրդի կողմից տարեկան մեկ անգամ։

բ) արտակարգ, վորը անհրաժեշտության դեպքում հրավիրվում է ընկերության խորհրդի կողմից կամ ընկերության անդամների ընդհանուր թվի $^1/_5$-ի, կամ ընկերության վերստուգիչ հանձնաժողովի պահանջով։

35. Ընկերության համագումարը կայացած է համարվում, յեթե ներկա յեն ընկերության բոլոր անդամների առնվազն $^1/_5$ մասը ընդգրկող գավառային և շրջանային կազմակերպությունների պատգամավորները։

36. Համագումարի ներկայացուցչության նորմաները, համագումարի արտակարգը, համագումար հրավիրելու ժամկետն ու կարգը վորոշում է ընկերության խորհուրդը։

37. «Ցերեխաների Բարեկամ» ընկերության համագումարի իրավասությանն է վերաբերում՝

ա) քննել և հաստատել «Ցերեխաների Բարեկամ» ընկերության խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի զեկուցումները, հաշվետվությունները և նախահաշիվները։

բ) փոփոխության յենթարկել ընկերության կանոնագրությունը։

ԾԱՆՈԹՈՒԹ.—Կանոնագրության մեջ փոփոխություն մտցնելու համար անհրաժեշտ է, որ համագումարին ներկա լինեն ընկերության բոլոր անդամների առնվազն $^1/_3$ ընդգրկող կազմակերպությունների ներկայացուցիչները։

գ) ընդհանուր բանաձևեր և դիրեկտիվներ ընդունել ընկերության աշխատանքների վերաբերմամբ.

դ) խորհրդի վերստուգիչ հանձնաժողովի ընտրություններ կատարել.

ե) ընկերության լուծարքի հարցը վճռել։

38. «Յերեխաների Բարեկամ» ընկերության բջիջների շրջանային և քաղաքային կոնֆերենցիաները լինում են՝

ա) հերթական, որը հրավիրվում է բջիջների բյուրոյի կողմից տարեկան առնվազն յերկու անգամ.

բ) արտակարգ, որը հրավիրվում է բջիջների բյուրոյի կողմից անհրաժեշտության դեպքում, կամ անդամների ընդհանուր թվի $^1/_5$-ի, կամ վերստուգիչ հանձնաժողովի պահանջով։

39. Բջիջների բյուրոների կողմից հրավիրվող կոնֆերենցիաների իրավասության և վերաբերում՝

ա) քննել ու հաստատել բջիջների բյուրոյի և վերստուգիչ հանձնաժողովի զեկուցումներն ու հաշվետվությունները.

բ) ընդհանուր բանաձևեր և դիրեկտիվներ ընդունել բյուրոյի աշխատանքների վերաբերմամբ.

գ) բյուրոյի և վերստուգիչ հանձնաժողովի ընտրություն կատարել.

դ) քննել բջիջների բյուրոյի լուծարքի հարցը.

ե) վճռել «Յերեխաների Բարեկամ» ընկերության լուծարքի հարցը։

VI. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՆՐԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՔԸ

40. «Յերեխաների Բարեկամ» ընկերության կամ նրա տեղական բջիջների բյուրոյի լուծարքի հարցը վճռվում է ընկերության անդամների համագումարներում և կոնֆերենցիաներում, որոնց պետք է ներկա լինեն ընկերության անդամների $^2/_3$-ը։

41. «Յերեխաների Բարեկամ» ընկերությունը, ինչպես և նրա տեղական (շրջանային) բջիջների բյուրոները կարող են լուծարքի յենթարկվել նաև կառավարական մարմինների կարգադրությամբ։

42. Ընկերության ամբողջական լուծարքի դեպքում նրա ամբողջ գույքն անցնում է այն համապատասխան մանկական հանձնաժողովի կամ համապատասխան պետական մարմնի ձեռքը, որոնք պայքարում են յերեխաների կյանքի առողջացման և նրանց անապաստանության ու անխնամության դեմ։

43. «Յերեխաների Բարեկամ» ընկերության գավառական կազմակերպությունը լուծարքի յենթարկվելու դեպքում նրա ամբողջ գույքն անցնում է «Յերեխաների Բարեկամ» ընկերության հանրապետական խորհրդի ձեռքը, իսկ շրջանային կազմակերպության լուծարքի դեպքում՝ գավառական խորհրդի ձեռքը։

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
Անվան
Публичная библиотека

ՀՀ Ազգային գրադարան
NL0215932

44

43438